ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

05-ը հոկտեմբերի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Հոկտեմբերի 5-ի՝ Ուսուցչի օրվա առիթով

Սիրելի՛ մանկավարժներ. կրթության ոլորտի աշխատակիցներ. Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հոկտեմբերի 5-ի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ: Ձեր աշխատանքը առաքելություն է՝ ուղղված սերունդների դաստիարակության, կրթության, մարդկային բարձր արժեքների փոխանցման շնորհակալ գործին: Մենք՝ հայերս միշտ ակնածանքով ենք վերաբերվել ուսուցիչներին, մեծարել ու բարձր դասել նրանց ազգապահպան ու նվիրյալ աշխատանքը:

Առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյան համայնքի ուսուցիչներին, դաստիարակներին, կրթության ոլորտի բոլոր աշխատակիցներին:

Ձեզ է վստահված մեր համայնքի երեխաների ու երիտասարդների կրթության բարդ, պատասխանատու, բայց և պատվաբեր աշխատանքը: Մեծապես ձեր օրինակելի կերպարից ու աշխատանքից է կախված, թե ինչպիսին կլինի վաղվա Աբովյանը:

Անձամբ կարևորում և բարձր եմ գնահատում յուրաքանչյուրիդ նվիրյալ աշխատանքը, տարիների վաստակն ու ներդրումը կրթական ոլորտում:

Սիրելի՛ ուսուցիչներ, դաստիարակներ.

Կրկին շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի կապակցությամբ, մաղթում եմ անսպառ եռանդ, ստեղծագործական բեղմնավոր աշխատանք, մասնագիտական վերելքներ և ամենայն բարիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ